

ՍԱՐՈՅԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՏԵՎԻՑ: Գլխավոր խմբագիր՝ Սուրեն Դանիելյան.-Եր.:
„Զանգակ,, 2009.-144 էջ:

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի
„Սփյուռք,, գիտաուսումնական կենտրոնի հրավիրած երկօրյա միջազգային
գիտաժողովի /14-15 հոկտեմբեր, 2008/ նյութերի այս ժողովածուն ներառում է
Չայաստանի և Սփյուռքի սարոյանագետների հոդվածները, որոնք, լրացնելով
միմյանց, լուսաբանում են մեծ գրողի կյանքի ու ստեղծագործության տարբեր
կողմերը: Գիրքը կազմել և խմբագրել է կենտրոնի ղեկավար, բան. գիտ.
դոկտոր, պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Ժողովածուն յուրօրինակ փորձ է՝ տարբեր մեկնակետերից քննելու Սարոյան
գրողի, իմաստասերի և գեղագետի հոգեմտավոր դեգերումների բազմաձև
շերտերը: Մի դեպքում հոդվածագիրների տեսադաշտում հայտնվում են
սարոյանական կերպարների՝ կյանքն ընկալելու բարոյահոգեբանական
նրբերանգները /Ս. Դանիելյան, Դ. Նազարյան, Ա. Դոլուխանյան/, մյուս
դեպքում առաջին պլան են մղվում գոյափիլիսոփայական խնդիրների հանդեպ
մեծ գրողի՝ ձևակերպումներում պարզ, իսկ իմաստային առումով խորքային
ըմբռնումները /Յ. Մուսայելյան, Բ. Գալստյան, Ի. Կարապետյան/, երրորդ
դեպքում ՈՒ. Սարոյան-հայ իրականություն փոխառնչություններն են, որոնք
դիտարկվում ու քննվում են հայ գրողների, թատերագետների
գնահատականների հենքի վրա /Վ. Փիլոյան, Լ. Մուրաֆյան/: Եվ իրավացի է Վ.
Փիլոյանը, երբ, երկրորդելով հայ մեկ այլ մեծանուն գրողի՝ Յ. Մաթևոսյանի
միտքը, նկատում է. „Եթե ամենուր եւ ամեն ինչում ենթադրում է չափման
նվազագույն միավոր, ապա ՈՒ. Սարոյեանի գրականութեան չափման միավորը
մարդն է, եւ նրա նպատակն ու երազանքն են մարդն ու մարդկայնութիւնը,,
/Վալերի Փիլոյեան, Ուիլեամ Սարոյեանը՝ Յրանդ Մատթեոսեանի
գնահատմամբ, „ Սարոյեանի ճշմարտութեան ետեւից,, Եր. „Զանգակ,-97,,
2009, էջ 76/:

Խրախուսելի քայլ է ժողովածուում „Միջազգային գիտաժողովի
ուսանողական ենթաբաժին,, խորագրի ներքո ուսանողների կարդացած

զեկուցումների ներառումը: Նրանցից մի քանիսի վերնագրերն իսկ /,Չայկական ոգու ընթռնումը Ուիլեամ Սարոյեանի երկերում,, ,,Մարդը եւ աշխարհը Ուիլեամ Սարոյեանի ,,Ուեսլի Ջեքսոնի արկածները,, վեպում,, ,,Կեանքի եւ մահուան խորհուրդը Ուիլեամ Սարոյեանի ուշ շրջանի ստեղծագործութիւններում,./ վկայում են մեծ գրողի ստեղծագործական ժառանգության հանդեպ նոր սերնդի լրջմիտ մոտեցման և գիտական հետաքրքրությունների շրջանակների մասին:

Ուիլյամ Սարոյանը հարազատ ժողովրդի անցած նախորդ հարյուրամյակների պատմության խտացումն ու միաժամանակ համադրումն էր այն նոր միջավայրին, որը բաժին էր ընկել Մեծ եղեռնի հետևանքով իրենց բնօրրանից զրկված հայ ժողովրդի բազում զավակներին: Այդ խտացումն ու համադրությունը տեղի ունեցան այնքան բնական ու ներդաշնակ, որ, ինչպես նկատում է ,,Ուիլեամ Սարոյեանի նպաստը ամերիկեան գրականութեան եւ հայութեան,, հոդվածի հեղինակ, պրոֆ. Օշին Քեշիշյանը, ,,...իր իսկ գործերուն մէջ ան նրբանկատօրէն Չայաստանն ու հայը հաճախ ներկայացուց առանց յոգնեցնելու կամ ձանձրացնելու ընթերցողը` իր պարզ ոճին յաճախ միացնելով նուրբ զուարթախոհութիւն մը,, /Նույն տեղում, էջ 34/:

Ժողովածուն կազմված է խնամքով, հոդվածների տեղադրման և հաջորդականության մեջ նկատելի է դրանց կառուցվածքային ներքին միասնություն և փոխկապակցված ամբողջականություն հաղորդելու միտումը, ինչը գիտական առումով անհրաժեշտ և արդարացված մոտեցում է:

,,Սարոյեանի ճշմարտութեան ետեւից,, հոդվածների ժողովածուն ուշագրավ ներդրում է սարոյանագիտության մեջ: